Health
Policy and
Innovation
Center

«ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
hpic.ngo@gmail.com ՀՀ, ք.Երևան, 0056, Նանսենի 6 շ, բն. 57 +374 (99) 094577

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
Մարզպետ՝ Տրդատ Սարգսյանին

«Առողջապահության քաղաքականության և
նորարարության կենտրոն» ՀԿ
Ծրագրերի ղեկավար
Լիլիթ Գևորգյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ և Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստանի կողմից իրականացվող «Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» նախաձեռնության շրջանակներում, «Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է «Մշտադիտարկումն ու ջատագովությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության» ծրագիրը: Վերջինիս շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև ՀՀ տարածքում տեղակայված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պոլիկլինիկաներում մշտական գործող ուղեգրող հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողովներ) գործունեության ուսումնասիրություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ինչպես նաև, հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ ստորև նշված հարցերի վերաբերյալ՝

- Վայոց Ձորի մարզպետարանի ենթակայությամբ գործող՝ Եղեգնաձորի ԲԿ-ում, Վայքի բուժական միավորումում և Ջերմուկի ԱԿ-ում գործող հանձնաժողովների 2018 և 2019 թթ-ի կազմը և այն հրամանը, որով հաստատվել է տվյալ կազմը:

- Վայոց Ձորի մարզպետարանի ենթակայությամբ գործող՝ Եղեգնաձորի ԲԿ-ում, Վայքի բուժական միավորումում և Ջերմուկի ԱԿ-ում գործող հանձնաժողովների՝ 2018 թվականի նիստերի արձանագրությունները: Ինչպես նաև խնդրում ենք նշել, թե 2018 թ-ին քանի՞ անձ է դիմել նշված հանձնաժողովներին, նրանցից քանիսի՞ դիմումն է մերժվել, քանիսի՞նը բավարարվել և քանիսի՞նն է ուղորդվել այլ Հանձնաժողովի (առկայության դեպքում):

- Խնդրում ենք կցել նաև այն իրավական ակտ(եր)ը, որով սահմանված է վերոնշյալ հանձնաժողովների գործունեության կարգը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 1234
«03» 04 2019

Health
Policy and
Innovation
Center

«ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
hpic.ngo@gmail.com ՀՀ, ք.Երևան, 0056, Նանսենի 6 շ. բն. 57 +374 (99) 094577

օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ):

Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու սույն հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ փոստային նամակով կամ **hpic.ngo@gmail.com** էլ. հասցեի միջոցով:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

(Պատրաստ ենք վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալություն՝

«Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՀԿ
Ծրագրերի ղեկավար՝ Լիլիթ Գևորգյան

27.03.2019